

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Լոյսը կը հրատարակուի Չորեք- արբի եւ Շաբաթ օրերը:

Կ. պոլսոյ համար Տարեկան գինն է մէկ լիւր Օսմանեան կոն- խիկ վճարելի:

Գուրու գնացած լրագրաց համ- րու ծախար առողիկ վրայ է:

Մէկ քերթ 40 փարս:



Հ Ա Ն Գ Է Ս Ա Չ Գ Ա Յ Ի Ն

Լ Ս Յ Ս

Նոր արեւոյ առթիւ մեր տեղու- թիւնն հրատարակեցինք Հանդիսիս Բ. երեսին մէջ:

Հօս կուղեմք մի քանի խօսք ընել Լոյսի նկատմամբ:

Լոյսը մեր խմբագրութեամբ սկսու- է հրատարակել 1879 սեպտ. 15էն, աշ- խատակցութեամբ Տ. Յ. Յ. Պարոնեա- նի, որոյ զաւելջողական գրութեանը իրաւամբ մեծ ընդունելութիւն գը- տած են լրջամիտ անձանց կողմէ, սակայն այդ ընդունելութիւն սոսկ քարոյական քաջալերութեան օրին- արդիւնք չարտադրելուն պատճառա- եօթմ ամեն ստիպուեցաւ ապարէզէն քաջաւերու, որովհետեւ չէր կրնաւ պիտանական համակրութեամբ և և թմ ապրել:

Կղբայինք թէ մեր պատուարման բարեկամին ակամայ բաժանում պա- րտալ մը կը թողոր գրական հրատա- րակին վրայ որոյ հեռագծեալ անը- ուսացմանը կը զմանք ի սրտէ, բայց ինչ կրնայինք ընել, երբ զմեզ անկա- րող կը գտնէինք. — Կիրթ ճաշակի և ճշմարտագիտ գեղեցիկն սիրահար լրջամիտ անձինք կրնան բարեկամ թէ այսպիսի պարագայի մէջ մեր մտա- ծուկիւն ս'ը կը յանդէր, մտածու- թիւն, զոր կը զգուշանանք բացատ- րել աստ, անշուշտ զգայութեան շը վերաբերելու համար, որովհետեւ զոր- մանակի բան, ճշմարտութիւն մը խօսիլ և պակասութիւններ նշաւակելն ընդհանուրի զգայութեան վերաբերու- նշանակութիւն ունի եղեր, և հետեւ արքա պղպարեցութիւն է եղեր:

Ահաւաստի արամնրանութիւն մը, որուն, զժբաղդարար ըսենք թէ քարեքարդարար, մեր խելքը չհաս- նիր:

Ինչ որ է անցինք այս կէտ և զաւանանք մեր նիւթին:

Տ. Յ. Յ. Պարոնեան ի խմբոյ բա- րեկամաց կսկի վերստին իւր զաւելջ- տական գրութեանը, որովք ևս Լոյս ճոխացեալ նոր արեւին կը ներկայա- նայ իւր ազնիւ ընթերցողաց, հա- շատի լինելով թէ ինք և թէ Տ. Յ. Յ. Պարոնեան գէթ տյտուհետե քաջալե- րութիւն պիտի գտնեն:

Լոյսի նիւթեր աւելի ևս ճոխացը- նելու և զայն առաւել ևս օգտակար ընծայելու համար խմբագրութիւնս ուրիշ ինչ ինչ անօրութեանց ալ ձեռ- նարկած է զորս պիտի ծանուցանենք ընդհուպ:

Լոյսն յետ այսօրիկ պիտի պարու- նակէ նաև ի թրքահայաստանէ, ի Ռուսահայաստանէ և ի Փարս-Ասիայէ ճգտակար թղթակցութիւններ ու վի- ճակագրական տեղեկութիւններ:

Բժշկականէ զատ՝ զոր կը գրէ

Մեծ. Տօքթ. Փ. Մալեղեան էֆէնտի բանաստեղծական ընտիր գրութեանը ևս պիտի հրատարակուին, զորս ապ- յօժրած է Մեծ. Տ. Արայ, որոյ ստանաւոր մէկ գրութեան հրատարա- կեցինք վերջին թուով:

Վերջապէս հարկ կը համարեմք ը- սել այս առթիւ թէ Լոյսն հաճելի հրատարակութիւն մ' ընելու համար ջանք և աշխատութիւն պիտի չնա- յենք երբէք:

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

Գուառացի բարեկամ մը որ լաւ տեղեկութիւն ունի գործոյ, կարի- նէն այս անգամ նամակ մը գրելով կը խօսի այն ապարութեան վրայ, զոր յառաջ բերած են Միացեալ քն- կերութեանց յարգել անգամնց ոմանց իրարու դէմ՝ հրատարակեցին յարձա- կու մենք և ի դատաս վարժարա- նաց պաշտօնէից ոմանց եպիսկոպի վար- մանքն և ընթացքը:

Այս վերջինն նկատմամբ, ինչպէս յայտնի է, լրագրաց մէջ իսկ գան- գատներ կային, և Մասիս դեռ անց- եալ օր գիտողութիւն կընէր իր հը- րատարակած մէկ թղթակցութեանն առթիւ:

Մեր պատուարման բարեկամն ինչ ինչ գիտողութիւններէ յետոյ կընէ՝ զգուառացի տեսնելով կրթութիւն տարածելու պաշտօն ունեցող անձանց վարմանը, կսկի գոյթակցել և հա- մադուրմ գոյացնել իւր մտաց մէջ թէ կրթութիւն ըստածն աղէկ բան չէ եղեր, և կեղարկայնէ՝ Ե ահա այսպի- սի ակաւոր պարագաներ պատճառ ե- ղած են զժբաղդարար որ Եսմիկը խորչի կրթութեան և չուզէ նուիրել իւր օգնութիւնն և աշխատութիւնը:

Շատ դիւրին բան չէ ըսել թէ գուառացի Եսմիկն իրաւունք չունի գայթակղելու և համոզելու զայն թէ սխալ է մասնաւոր է ընդհանուր հետեւութիւն յառաջ բերել, ո- րովհետեւ Եսմիկն իր տեսածին կը հաւատայ, քան թէ լրածին:

Մեք այս ամեն հետեւութիւն ար- դէն ի նկատ առելով՝ դիտել կու- տայինք մասնաւոր կերպով և կը հը- րուիրէինք վերջ տալ հրատարակային կծու և գայթակղական հրատարա- կութեանց և հաշույ վերաբերմալ գործողութիւնները կարգադրել զը- քննակ նստի մէջ, և կաւելցնէինք, ընկերութիւնը պարտի լաւ ուշադ- րութիւն ընծայել գարոյական պաշ- տօնէից ընտրութեան գործին և մի- անդամայն աշխուրջ հակողութիւն ի գործ դնել վարժարանաց վիճակին, կացութեան և պաշտօնէից վարմանցը մասին:

Ինչ որ է եղածը եղած է, չէնք ուզեր ծանրանալ ասոր վրայ, այլ կու- զենք, մասնաւոր թէ կը զմանք որ անցելոյն հետեւերը ջնջելու համար ներկային մէջ լաւ զգուշութիւն ի գործ դրուի, և մասնաւոր հոգ տար- ուի Եսմիկն սխալը բուժելու և նմա վտահաւորութիւն ներշնչելու գործ- քով և ալ խօսքով:

Կը թուի թէ անցելոյն աղգած փորձառութիւնը պիտի կրնայ մեզի լաւագոյն դատ մ' ընծայել և հետեւ արար այնպիսի ընթացքով մը վար- ուի, որով կարենանք մեր բաղձա- նաց վերջակէտին համիլ, այն է, ծառայել ամեն ուրեք կրթութեան գործն, ընդհանուրն աշխուրջ կեանք զոր ձեռք բերելու առաջին պայմանն ինչպէս յայտնի է, վտահաւորութիւնն է:

Ուրեմն իրնայ դիւրու հակողութիւ թէ Միացեալ Ընկերութեան Երես- փոխանական և մասնաւոր Տնօրէն Ժողովը որքան փափուկ և զժուարին պաշտօն մը ստանձնած են և թէ որ- պիտի զպայմաններով կրնան իրենց բարձր նպատակին համիլ և հետ- զհետ ընդհանուրին վտահաւորութիւնն և աշխուրջութիւնը վարելու:

Ըսել չենք ուզեր թէ պէտք չէ որ հրատարակային ընտադատութիւն- ներ չլինին:

Քննադատութիւնն, ըսել կուղեմք լաւը և անկողմնակալ քննադատու- թիւնն անժխտելի պէտք մ' է, որ կրնայ կատարուիլ և օգտակար լինիլ եթէ զերծ լինի բոլորովին կիրքէ, եթէ հասարակաց բարին և եթէ կրնն նպատակ ունենայ և եթէ գործ շինե- լու սահմանէն անդին չանցնի, մէկ խօսքով եթէ ընդհանրապէս ժողո- վրդեան ծանուցեալ արամագրու- թիւններն հաշուի առնուին:

Առ այժմ՝ բաւական կը համարեմք այսքան գիտողութիւն և կապտեմք տեսնելու համար թէ ներակալով Պատ. Տնօրէն Խորհուրդն և Երեսփոխանա- կան Ժողովն անցեալը դարմանելու համար ինչ ընթացք պիտի բռնեն:

Թ Ա Տ Ե Ր Ա Մ Ա Ն Ե Ր Ե Կ Ո Յ Թ

Յօգուտ Միացեալ Ընկերութեանց թա- տերական խիտ շքեղ և փառաւոր ներ- կայացումն այս զինքը տեղի պիտի ունե- նայ Վէրտի թատրոնն, ի Բերայ, ի ժա- 2 1/2:

Մեր մասնաւոր տեղեկութեանց նայելով երեք Աշնուարայ Տիկնանց այն բարենը- պատակ ձեռնարկութիւն կրթութեան աղ- գայնոց կողմէ յոյժ համակրական ընդու- ներութիւն գտեր է, որովհետեւ, կը լսուի թէ թատրոնին բոլոր օթեակները սոյն գիշերուան համար ծախուելէ զատ՝

Պ Ա Յ Մ Ա Ն Ք

Նամակ կամ ո եւ գուրիւն պէտք է ուղղել Ա. Մ. Գալի -- մանեան Կ. պոլսոյ, Չագմագերի Բ, Սիւմայիլի խան քիւ 47, Տեհեսեան սպարանը:

Մանուցման տղը մէկ անգամի համար 2 դր. 2 անգամի համար 2 դր. 4 անգամի անգամնե- րու համար յոս անգամի կ'ըլլա



պարագա ամոռ կամ թիկնաթոռ ևս չէ մնացեր:

Այսպիսի մի շարժում տարակոյս չկայ թէ յոյժ միակարական է, և մեք կըլը- ձամք որ այսպիսի մի գեղեցիկ պարագայ նմանօրինակ ձեռնարկութեանց մէջ ալ երկի շարունակ:

Ա Չ Գ Ա Յ Ի Ն Լ Ո Ւ Ր Ե Ր

Կը լսելք թէ Պատ. Գեր. Փոխանորդն ալ հրատարական մատուցեր է, որոյ պատճառը սակայն չկրցինք իմանալ:

Ն. Գերապատուութեան հրատարական մատուցանելն անշուշտ տհաճութիւն պի- տի պատճառէ ամեն ազգայնոց, որովհետեւ Գեր. Տ. Միկրեանի յաջորդող անձանց մէջ այն միակ անձը գտնուեցաւ Գեր. Բուսնուգ- լեան, որ կրցաւ իր անձին վրայ ջոյց տալ Պատրիարքական Փոխանորդութեան վա- լուկ պաշտօնին պահանջած լաւը հան- գամանքները:

Գոչ եմք սակայն ըսելու թէ վարչական Խորհուրդը չէ ընդունած նորա հրատա- րականը:

— Միացեալ Ընկերութեանց Պատ. Տնօ- րէն Խորհուրդն յաճախակի նխտեր կընէ և կըբաղի զլրատարար պարահանգիսի կարգադրութեամբ, որ պիտի տրուի ներ- կայ ամսոյ մէջ:

Վ Ի Ի Պ Ա Կ

Մեր չորեքարթի տուր թուով հրատա- րակեալ և «Մուսայր 2-րդ» խորագրը կրող տոմարներն մէջ հետեւեալ տպա- գրական սխալներն սպրդած են:

տող	սխալ	ուղիղ
5	այերն	այեան
10	ձերոյն	ձերոյն
12	տիրացուչ	տիրացուչ
14	քաջը	քաջը
20	զմայրելու	զմայրելու
24	զվիհն	զվիհն
24	նուագէր	նորագէր
43	թէ	թէ
52	յոր կոյս	յոր կոյս
55	չառու	չառու
57	կը հնչէ	չը հնչէ
60	սիրուն այլ	սիրան այլ
71	Բոլիմայ	Բոլիմիայ
72	սրբագեղ	սրբագեղ
76	խորին	խորին
78	ինչպէս	ինչպէս

Զ Ի Ն Ժ Ի Ը Ն Ի Ն Գ Ր Ս Տ Ո Ւ Ն

Յիշեալ դրատան մէջ (ի Մահմուտ- վաշա թիւ 39) կը վաճառուին ամեն տեսակ գիրք, դասագիրք, գրական պիտոյք, և ըն, խիստ աժան գնով, և ուր կընդունուին դաւառական յանձ- նարարութիւններ և կը կատարուին խիստ գոյացուցիչ կերպով:

յը Կիլիկիոյ կաթողիկոսին գործակա-
տարն չէ եղած :

Գեղարանի մը մէջ .
— Պարոն գեղադործ , մայրս մէ-
կէն ի մէկ հիւանդացաւ , կուզէի բը-
ծիշկ Ե . . . տանիւ :

Ամեն . Ս . Պատրիարքին հրատար-
կանն ամենուս յայտնի է :

Ղարած գրոյցներուն նայելով Պատ-
րիարքարանի զրազրներն ալ կը
պատրաստուին եղեր հրատարելու :

Պատուելի , դուն բնագիտու-
թեան դասատու ես , որչափ ըլլայ նէ
քու խելքք մեր խելքէն վեր է , կըր-
նաս ինձի գրուցել թէ աս քօնսօլիտն
ինչու համար կինայ կոր :

— Պատուան շատ յայտնի է :
— Ինչ է :
— Այն որ օքէն ծանր է կինայ և
այն որ օքէն թեթեւ է կը բարձրա-
նայ , ուստի քօնսօլիտը բարձրացնե-
լու համար կամ օքը աւելի ծանրա-
ցնելու է և կամ քօնսօլիտն աւելի
թեթեւցնելու է :

— Քօնսօլիտն ինչպէս կը թեթե-
ւայ :
— Սիկարի թուղթէն շինվի նէ՛ կը
թեթեւայ :

— Աս ըլլալու բան չէ . օքը ծան-
րացնելու ճամբայ մը չիկայ :

— Եթէ ըլլար՝ հարկաւ հարուստ
սեղանաւորներն կը մտածէին առօր
վրայ :

— Ըսել է թէ այն հաշւով քօնսօ-
լիտն միշտ պիտի իյնայ :

— Քօնսօլիտը բարձրացնելու համար
ուրիշ միջոց մ' ալ կայ :
— Ո՛րն է ,
— Պօրսան ծովու վրայ տանիւ . վա-
սընդի շուրն օքէն ծանր ըլլալով միշտ
վեր կը տանի քօնսօլիտն : Միայն թէ
պօրսան ապահով սեղ մը դնելու է
որ չըլլայ թէ ուստ շողենաւէ՛մը դար-
նուի ծակուի և ծովուն տակը թա-
ղուի ,

— Աստնք ըլլալու բաներ չեն :
— Անանկ է նէ քօնսօլիտին բարձ-
րանան ալ ըլլալու բան չէ . . . բնա-
դիտական տեսակետով :

որդին Արշակ այսօրուէն սկսեալ
վարժարանս չախտի ընդունուի , այն
պատճառաւ որ քանի մը ամիս է թո-
շակ բերած չունի :

Ինչքերով որ ընդունիք խորին յար-
գանաց հաւատարմքն մնամ . . . :

Վիճակագրական
188 ի մէջ մահուամբ պակասածնե-
րը .

Փարոս պատկերադարգ հանդէսն ,
Հայոց Պատմութիւն տպելու ազա-
տութիւնը :

Միացեալ ընկերութեանց անդա-
մոց սմանց մէջ յիշեալ ընկերութիւն-
ներէն անձնական շահ հանելու յոյն ,
Հայկական խնդիրն ,

Պարտատէրներուն խղճմտանքը ,
Պատրիարքարանի մուկերն (անօ-
թութեանէ) :

Վանայ վարժապետանոցը
Աղքային փողովոյ գումարման կո-
նտրակտութիւնն ,

Վարժապետներու ներկայն ,
Լնֆիէճեանի Պատրիարք ըլլալու
յոյրը ,

Աղբիւնուպօղոյ աղքայներն ա-
ռաջնորդ հաւանցնելու միջոցը ,
Գումարաբուի միացեալ վարժարա-
նաց բարեխիշտակ միութիւնն ,

Շարժել իրիւրները դրամայ տուն
դառնալու բարի սովորութիւնը ,
Կաղանդի առթիւ նուէր տալու
նախագաւառումն ,

Իրարու խօսք հասկնալը ,
Առանց Պատրիարքարանի գիտու-
թեան առաջնորդներու Պօլիս չբեր-
ուելուն առանձնաշնորհութիւնն ,
Տուներու մէջ խմելու շուր գանե-
լու յոյսը ,

Շերքէթի խայրիչէի շողբնաւորու-
մէջ հանգստութիւն ,
Առանց քառակահափի փողոց գանե-
լու դիւրութիւնը :

— Ատ ալ բան մ է , երբեմն կըլ-
լայ որ ես պարտատէրներէ շտանը-
ուելու համար օրը հազար փողոց կը
փոխեմ :

Պ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆ
Ա. Ս. Պ.
Մէհմէտ բաշա խան թիւ 18 գրա-
սենեակը Ֆրանսերէն լեզուի դասա-
խօսութիւն կը լինի գիւրաւոյց եղա-
նակաւ և համեստ գներով :

Նոյնպէս սոււմարալալութեան դաս
կը տուի և վաճառականաց հաշի-
սոււմարներ կը կարգադրուին չափա-
ւոր պայմաններով :

ԻՐԱԳՒԻՏՈՒԹԻՒՆ
Աշխարհայեաց
Մ. Յ ԱԳԱՊԱԿԵԱՆ
. . . Մկրտիչ . . . Ազատական

Կրթական Տեսչութիւնն ստացաւ Ձեր
նոյնաբեր Ց ամսաթիւն նամակն ինչպէս և
Ձեր երկրպարտ զիբագիրութիւնն անուն
դասագրիքն և նորա օբարհատութիւնն ի
պէտս վարժապետաց՝ դասատետն որ
կը ներկայէք մեզ ի վաւերացումն :

Կրթական Տեսչութիւնն ի քննին առնե-
լով Ձեր այն երկրպարտութիւնն , գանտը
ապշ . ընտելարանաց մէջ գործածութեան
արժանի գտաւ և վաւերացոյց :
Մշտնէ յարգանք
Աղք . Կեդր . Վարչութեան
Կրթական խորհրդական

Մ. ՄԱՄԻԿՈՆԵԱՆ
(Կէի)
Կրթական Տեսչութեան
ԻՐԱԳՒԻՏՈՒԹԻՒՆ ի պէտս վարժապե-
տաց , գին 3 դրոբէ :
ԻՐԱԳՒԻՏՈՒԹԻՒՆ ի պէտս աշակերտաց
գին 3 դրոբէ :

Ամեն դրամաճառաց քով կը գանութի
չատ գնողներու և դպրոցաց համար վեղչ
կը լինի :

Մոյն դասագրիքն՝ որ կը պարունակէ
մէն մի անկանոն բայի խոնհարումն , և
որ ճօնացեալ է 40ի չափ ընդարձակ հը-
րահանգներով , գործածական ոճերով ,
կարևոր դիտարկութեամբ և ընտիր ա-
ռանքերով , զորս երկրպարտն ինձումով
քաղած է Փիլոսոփիոյ ու Պէճընի Էնթը
խոնհարումն էն , կուտուսի ու կուտովչէնի

քերականութիւններէն , և Պէճընի բա-
ռագրէն , նպատակ ունի դիւր և ըսթա-
փեցուցիչ եղանակաւ մը ուսուցանել ա-
շակերտաց Ֆրանսերէն լեզուի անհնչն
էական մասն , այսինքն անկանոն . բայից
խոնհարումն , որոց համար աշակերտը՝ մինչև
ցարդ , մի մեծ դժուարութիւն կը կրկին
զուրկ լինելով դասագրքէ մը որ խօսէր
սովապէս անկանոն բայից վերայ :

ԸՆԴՈՒՐՉԵԿ Օ Ր Ա Յ Ո Յ Ց 1882 ՏԱՐԻՈՅ

Սեպտեմբերէն Աղքայի Հիւանդանոցի Հայոց
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԱՄԵԱՆ

Երկու հարիւր քստասուն երեսէ բազ-
կացեալ այն ընդարձակ սպառութիւնը
բայի բուն Օրացուցէ կը պարունակէ հե-
տեւեալ կարեւոր ճոխ տեղեկութիւններն .

Վիճակագիր Տաճկաստանի . — Օսման
եան դեսպանը ի զանազան աշխարհս .
— Դեսպանը եւ Հիւպատոսը օտար տէրու-
թեանց ի Մայրաքաղաքին . — Յանկ Օղ-
մանեան Սուլթանաց . — Իշխանութիւնը
ընդ գերիշխանութեամբ Սուլթանին .
— Հայրապետութիւնը Հայոց . — Պատ-
րիարքութիւնը . Անդապէ Աղքային փող-
ոցի եւ Կրօնային տանին . — Պատմութիւն
դաքային տանին եւ վարչական սենեկի .
— Անդապէ Անանանական սենեկի , և Ալ-
քային կեդրոնական դատարանի Անհա-
տական սենեկի , եւ Պաշտօնայեք Պատ-
րիարքարանի . — Ընդարձակ վիճակագ-
րութիւն տէրութեանց՝ Գերակայի , Գա-
ղիայ , Անգղիայ , Աւստրիայ , Ամերիկայի , Ի-
գուստիայ , Պէճընի , Զուլթաէ . — Փոստ-
կալի , Տանիմարայի , Մեքսիքայի , Ճարու-
տի . Շուէտ . Նորվեգիայի , Յունաստանի ,
Չիլիի , Պարսկաստանի , Չինու , Պարսիկի ,
Սպանիայ եւ Հոլանտայի : — Պատմութիւն
ժամանակագրական երեսելի անցից .
— Նոր ցուցակ գնոց հեռագրութեանց
Եւրոպական եւ Ասիական քաղաքաց
Պուրիայ . — Նիկ (Թարիֆ) հեռագրի
ըստ նոր կարգադրութեան Միջազգային
հեռագրութեանց . — Յուցակ գնոց Եւ-
րոպական Միջազգային թղթատարու-
թեանց . — Եւրոպական նախկատուներ
ի Կ . Պօլիս , Գերմանական , Անգլիական ,
Աւստրիական , Ֆրանսական , Հելլենական
եւ Ռուսական . — Ժամանակացոյց սուր-
հանդակաց Օսմանեան Միջազգային թղթ-
թատարութեանց . — Յուցակ գնոց Եւրո-
պական Տաճկաստանի երկրպետուց .
— Յուցակ գնոց եւ ժամանակացոյց եղբայ-
րական Մահոտի , Աւստրիական , Մէ-
սոպոթի-Մարթիթի , Բաքէ-Էնկ եւ Բնկ .
եւ Ռուսական ընկերութեան շողենա-
ւոց . — Տոկոսաւոր եւ պարգեւաւոր
արժէթուղթ զլուտուր տէրութեանց
եւ քաղաքաց Եւրոպիայ , Յուցակ գն-
քեւաց . — Այլեւայեք , Կորտէնքեօլու
Շուէտացոյն ուղեւորութիւնն ի Հիւսի-
սային բեւեռն , Ֆիլօքսէրա սրբը , Չինու
պարիսպը , Յորն արտադրող երկրը ,
Երկաթուղեաց արագութիւնը , Գաղթա-
կանութիւն յԱմերիկա , Լրագրաց թիւը ,
Վաճառականութիւն ուկրայ եւ արժաթի ,
Գաղթականութիւն Հայոց ի Ճափա .
— Աղքային մամուլ . — Գլխաւոր աղքաց
գրամներուն բաղդատութիւնը թուրքից
եւ Ֆրանսայի դրամներուն հետ . —
Գլխաւոր աղքաց չափերուն բաղդատու-
թիւնը թուրքից չափերուն հետ . — Բաղ-
դատական ցուցակ տարածութեանց եւ
բնակչաց Եւրոպական տէրութեանց .
— Ծանուցում , Արամեան ապարան եւ Գրա-
ստուն Բարիզու :

Կը ծախուի մասնաւորապէս Արամեան
սպարանը եւ ամէն գրավարձաւուաց
քով նաև Աղքային Հիւանդանոցի գրա-
սենեակը :

ԳԻՆ Յ ՂՐՇ

ԱՐՏՈՒԱՏԻՐ ԻՐԱԳՒԻՐ
Հ. Ե. ԳԻՄԱՐՏԵԱՆ Մ. ԳԱՍՏԱՅԱՆԵԱՆ
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՏԳՏԱՄԵԱՆ
Սիւնապոլիս խան . Ն . 47